

ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԱՐԼ ԼԱՄՊՌԵԽՏԻ

V-ՐԴ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՄԱՍԸ.

(Շարունակութիւն)

Սակայն մի՞թէ դրանով այդ ուսմունքը լրացած է: Ամենեւին: Ես արդէն մի անգամ ասել եմ, որ այդ պէտք ունի ամբողջական զտման, օգնութեան կանչելով սիստեմատիկ և մանրամասն կերպով, ոչ թէ պատահական վերստուգութիւններ կատարելով, միւսների ազդային զարգացումները, որովհետեւ այդպիսի պատահական ստուգումները յամենայն դէպս գործնականօրէն և միանգամ ընդմիշտ պարզ կերպով ցոյց են տուել, որ կուլտուրական ժամանակները գործադրելի են որեւէ ազդային զարգացման ամեն տեսակ ընթացքի նկատմամբ կամ աւելի ճիշտ ասած այդ զարգացման կմախքը պարզում է, սակայն գործադրուած մեթոդի բնոյթի, ինչպէս և իրերի իսկական դրութեան նկատմամբ ոչ միայն հնարաւոր են եղած, այլև արտայայտուել են կասկածներ, թէ ո՞րքան յարմար են սամանափակումները, երբ իրօք ի նկատի է առնուած միայն տիպիկը կամ չի՞ կարելի այնպիսի տարրեր առաջ քաշել որոնք, եթէ ի նկատի առնուին ուրիշ ազդերի պատմութիւնները, աւելի շուտ անհատական գերմանական կերևան: Երևում է, որ այստեղ ընդարձակ անվերջ աշխատանք պէտք է կատարել, մի աշխատանք, որի շնորհիւ և առանձին մարդկային խմբակցութիւնների տիեզերապատմական անհատական գործածները առաջին անգամ ապահով կերպով պատմական նիւթից կը զատուի և կը լինի իւրաքանչիւր գործնական և ոչ թէ որեւէ գերազույցական դրութեան ազդեցութիւնից առաջ եկած հաս-

կացողութեան համար նախապայման մեղ ծանօթ համաշխարհային պատմութեան զարգացման ընթացքը որոշելու:

Սակայն այս ամբողջ դիտողութեանը իսկոյն կցւում է նաև մի ուրիշ պրօբլէմ և մի դժուար, ամենից առաջ լուծելի պահանջ: Արդեօք գերմանական պատմութիւնից մինչև այժմ հանած կուլտուրական ժամանակները իրօք այն բոլորն են, որոնք ընհանրապէս հնարաւոր են: Արդեօք դէպի յետ և դէպի առաջ նայած նրանք լրի՞ւ են:

Այս հարցին պէտք է ոչ-ով պատասխանել: Մենք, գերմանացիներս, դէպի առաջ ենք յուսում և միւս, անցած կուլտուրաների, ինչպէս օրինակ հռոմէականի, ընթացքը ցոյց է տալի, որ ժամանակաշրջանների թիւը սպառուած չէ: Հետևապէս այս նկատմամբ մինչև այժմ գտածը լրացման կարիք ունի: Այսպիսով ծագում է ըստինքեան մի պահանջ որը դուցէ պատմագիտական տեսակէտից հասուն և խիստ հասուն կուլտուրայի նշան կարելի է համարել. այդ կպահանջէ առնուազն քննութեան ենթարկել հռոմէական, հնդկական, չինական կուլտուրաները: Բայց դործնական տեսակէտից հնարաւոր չէ իբր առաջին շարքում եղող պահանջ հետազօտել: Մի կողմից այն պատճառով, որ ներկան աւելի քան մեր սրտին մօտ է, որ կարողանանք այն անցեալների իմացութեամբ պարապել, որոնց տիպիկ ծներով ամենից շատ այսօր առանձին ապրող ժողովուրդների զարգացումը և զարգացման դրութիւնը հնարաւոր է իմանալ: Անուհետև մանաւանդ նրա համար, որովհետև քայքայուած կուլտուրաները—որոնց մասին այստեղ մասամբ խօսք կարող է լինել—իրենց խոր բնոյթով այն ժամանակ միայն հասկանալի կդառնան, երբ նրանցից առաջ եղած զարգացման աստիճանները ամբողջապէս ի նկատի առնուին: Այո՛, հէնց ցածր աստիճաններն այս դէպքում ամենից առաջ և յատկապէս որոշ պարզաբանութեան պէտք է ենթարկուին, որովհետև պարզ հոգեբանական հիմքերից ելած նրանց երևոյթները մի այնպիսի պատկեր ունին, որը անկման կուլտուրայի պատկերի հետ համեմատած արտաքուստ թէև նոյնը չէ, բայց նման է. այնպէս որ երկու պատկերների զուգահեռաբար դիտողու-

Թիւնք գուցէ աւելի քան որեւէ այլ գործողութիւն յարմար է անկման ներքին պատճառները պարզաբանելու համար:

Եթէ մենք այսպիսով այն կուլտուրական ժամանակների հարցը, որոնք ամենից տուաջ գերմանական պատմութիւնից են հանուած, ես եւք ծգում, միւս կողմից էլ նորագոյն պատմական գիտութիւնների դէպի միմեանց ունեցած յարաբերութեան դրութեան հարցը այս շրջանում ամենից անհրաժեշտը պէտք է համարել: Գերմանական պատմութիւնը հասնում է մինչև այն ժամանակները, որոնց առաջին հայեացքից ժողովրդագրական կուլտուրաների ժամանակաշրջաններ կարելի է անուանել: Յայտնի է, որ հին գերմանացիների դրութիւնները, որոնց մասին մենք առաւելապէս գիտենք Կեսարի և Տակիտոսի տուած տեղեկութիւնների հիման վրայ, շատ նման կողմեր ունին դեռ այսօր էլ ապրող կամ մի քիչ առաջ եղող այսպէս կոչուած ցածր ժողովուրդների դրութիւնների հետ. օրինակ կաթրների կամ եթէ ուղենանք որեւէ հնդկական ցեղի անուն տալ՝ տիլինկիտների:

Այն պրօբլէմը, որը պահանջում է գերմանական պատմութեան մէջ գտնուած կուլտուրական ժամանակներից այն կողմն էլ եղող ժամանակաշրջաններ գտնել նոյնն է այն պահանջի հետ, որի համաձայն ժամանակակից ժողովրդագիտութեան անհամար նիւթի մէջ պէտք է այն տեսակի հոգեկան զարգացման աստիճաններ գտնել, որ ծեռքի տակ եղած նիւթը առանց որեւէ բացի և առանց դժուարութեան նրանց տակ հնարաւոր լինի դասաւորել: Կարելի է հեշտ նկատել, որ այս պրօբլէմի լուծումը ժողովրդագիտութեան նիւթի կատարեալ պատմական դարձնելն է նշանակում ընդամին այս կր լինի կարգաւորումն ցածր ժողովրդների, թէ դեռևս ապրողների և թէ իրենց ներքին բնաւորութեան պատճառով ընդհանրապէս տիեզերապատմական ընթացքում ճանաչելիների. միաժամանակ այդ կնշանակէ որեւէ կերպ կարգաւորուած տիեզերապատմական գիտութեան կատարեալ ծաղկեցնելը: Այս ամենից երևում է, թէ ի՞նչ նշանակութիւն է ստանում մեր դրած հարցը:

Սակայն ի՞նչպէս պատասխանել այդ հարցին:

Այս դէպքում պէտք է մինչև այժմ վերլուծած նիւթերի ընդհանուր բովանդակութեանը չվերադրել մի բոլորովին որոշուողու նշանակութիւն: Ոչ թէ սօցիալական շերտաւորման և ընտանեկան կամ ցեղական կաղծութիւնների ուսումնասիրութիւնների վրայ հիմնուած կառուցումներից պէտք է ցածր կուլտուրաների բնութագրութեան սկզբունքներն սուսուրին. ոչ, նրանց ուսումնասիրութեան համար էլ աւելի շատ նոյն ելակէտն արժէք ունի, ինչ որ կայ բարձր կուլտուրաների համար. պէտք է հետազօտուեն հոգեկան կեանքի բարձր ֆունկցիաները:

Սրանցից մէկը նորից դասուում է այն մտքով, որ նրանով զբաղուելը ընդհանուր հոգեբանական դաստոգութիւնների հիման վրայ ամենից առաջ պէտք է լինի: Այդ երևակայութեան գործունէութիւնն է: Երևակայութիւնը այն հոգեկան գործողութիւնն է, որի մէջ տուեալ սարքերից նոր միութիւնների միաւորման ստեղծագործութիւն է կատարւում. այսինքն ամենից հեշտ ու պարզ կերպով երևան են դալի ժամադրութեան էական գործողութիւնը և սրանից առաջ եղող վերլուծմանը, դերիշխող ոյժերի զարգացման դէպքում: Այս պատճառով առանձին անհատների մասին հնարաւոր է եղել ասել.¹⁾ «Ի՞նչ ճանապարհով ընթանում է երևակայութեան գործողութիւնը, այդ ամենից աւելի անմիջականօրէն ցոյց է տալի, թէ ի՞նչ փորձառութիւններ և զուգորդութիւններ որևէ անհատի մէջ իբր բնաւորութեան հետեանք եռանդ են ստանում և ընդամին ի՞նչ ոգու ծնունդ է անհատը»: Ինչոր այստեղ անհետական հոգեբանութեան մասին է ասւում, այդ նոյնը աւելի ճիշտ վերաբերում է սօցիալ հոգեբանականին:

Եթէ ցածր կուլտուրաների ժամանակաշրջանները դանելուց յետոյ, որ նոյնն թէ ժողովրդագրական անհամար նիւթի վերլուծութիւնը ըստ պատմական կատեգորիաների դասաւորել, հարցը նոյնանում է երևակայութեան գործունէութեան հետազօտութեան հարցի հետ, ապա կարելի է և պէտք է այս շրջանում գործնական նկատումներով ձևակերպող դեղարուես-

¹⁾ Lipps եր. 126.

տի ուսումնասիրութեամբ սահմանափակուել: Նիմք կարող է ծառայել այն նիւթի վրայ պարզ հայեացք ձգելը, որը հաւաքուած է ժողովրդագրութեան համար: Անհրաժեշտ է ընդհանուր մեթոդական պահանջների նկատումով, այլև դործնական աշխատանքի տեսակէտից, որ այս նիւթից համեմատական հետազոտութիւնների համար միայն այն մասերը քննութեան առնուին, որոնք առանց բացառութեան կամ գրեթէ առանց բացառութեան ամենուրէք գրեթէ նոյն ծեով կան—այլապէս ի՞նչ ծեով հնարաւոր կը լինէր հիմնական համեմատութիւնը—ապա նրանք, որոնք միատեսակ, առանց հաղարաւոր տարբեր լեզուների միեմատութեան, ըմբռնման մատչելի են, այլապէս ի՞նչպէս կարելի էր մարդկային սահմանափակ միջոցներն ի նկատի ունենալով, համեմատութիւնը գլուխ բերել: Նիւթի այդ տեսակ մասերը գեղարուեստի պատմական յուշարժաններն են:

Երբ այսպիսով ֆնացած բոլոր ժողովրդագրական նիւթից հանած գեղարուեստապատմական նիւթը հետազոտութեան համար յատկապէս ժողովուած կը լինի, առանց կգայ մի այլ հայեցակէտ, այն է՝ ինչպէս որ այդ տեսականօրէն ու հոգեբանօրէն յատուկ նշանակութիւն ունի, դործնականօրէն էլ նոյնպէս ամենից առանց քննութեան առնուելի ցոյց տալ:

Ինչպէս յայտնի է ընդհանուր ժողովրդագրական նիւթից չի կարելի պատմական դատման և բաժանման որևէ թթխմոր ստանալ այն պատճառով, տիեզերապատմականօրէն նայած խնդրին, պակասում է այդ բանի համար առանց կարևոր եղող տարրը՝ թէ բացարձակ, թէ յարաբերական ժամանակագրութիւնը, այն ժողովրդների մասին, որոնց կուլտուրական ստացուածքները մեր թանգարաններում պահուած են. դուրս արտաքին պատմական այնքան քիչ բան գիտենք, որ հնարաւոր չէ իւրաքանչիւրի ստացուածքի կտուրները, որոնք հին ժամանակից են ֆնացել և որոնք յետոյ են աւելացրուել, ապահով ու առանց ֆնացորդի տարրալուծել:

Այստեղ օգնութեան է գալի նախապատմութիւնը, Բրիտի գիտութիւնը: Ինչպէս յայտնի է այդ վերաբերում է նաև ցածր կուլտուրայի ժողովուրդներին. սակայն թէև նրանց ըս-

տացուածքը հողի մէջ է փնտրուում, այնուամենայնիւ սրանցից հողի մէջ կատարուող պեղումներին մօտ առնչութիւն ունեցող պայմաններից ձեռք է բերուում հնարաւորութիւն ժամանակով շատ հեռու գտնուող գիւտերի համար, եթէ ոչ յաճախ բացարձակ, թէև այս էլ երբեմն չի պակասում, դոնէ յարաբերական ժամանակագրութիւն ստեղծելու: Յոցը կուլտուրաների մէջ կայ այն Առաջը և Յետոն, որը նոր ժողովրդագրական նիւթից իզուր աշխատում ենք յաճախ ու հաստատու կերպով վերջնականօրէն դուրս հանել:

Սակայն նախապատմութեան այս Առաջն ու Յետոն չի վերաբերում ցածր քաղաքակրթութիւնների, անցած ժողովուրդների ամբողջ կուլտուրային: Յայտնի է ինչքան նեղ է սահմանափակուած իրապէս բրիզագիտութեան ձեռք բերածը. մեծ մասամբ երևան է հանում յատկապէս երկարատև դիմացկունութիւն ունեցող յուշարձաններ և — որքան խնդիրը բարձր հոգեկան գործողութիւնների յուշարձաններին են կարող է վերաբերել — հաւասարաչափ և ամեն տեղ ձևակերպող գեղարուեստին վերաբերող յուշարձաններ:

Մեր դիտողութեան համար այս արդէն թուիչի կէտ է: Եթէ այստեղից յետ նայենք, կստանանք հետևեալը. ժողովրդագրական նիւթը պատմականօրէն մասերի բաժանելու համար անհրաժեշտ եղող ժամանակագրութիւնը կարելի է նախապատմութիւնից ստանալ. վերջինս այդ տալիս է միայն ձևակերպող գեղարուեստի նկատմամբ: Սակայն այդ նիւթի ժամանակագրութիւնը, եթէ դրանով նոյնիսկ հնարաւոր լինէր կուլտուրայի միւս ճիւղերն էլ պարզաբանել, ի նկատի ունենալով այն պահանջը, որ այդպիսով ժողովրդագրական նիւթը հեշտ ու հաւասարաչափ հասկացուի, այնուամենայնիւ միայն ձևակերպող գեղարուեստի ճիւղի նկատմամբ կարելի է գործադրել: Վերջապէս, եթէ բոլոր ճիւղերի համար բոլոր նիւթերը նախապատմութեան ու ժողովրդագրութեան մէջ հաւասարաչափ լինէին և նոյն հետազօտողը տարբեր ժողովրդների լեզուներին հաւասարաչափ լաւ տիրապետէր, այնուամենայնիւ, նիւթի ահագին քանակութեան պատճառով, դրա միայն մի մասի մշակումը կա-

րող էր սկսել և այս մասը, ի նկատի ունենալով հոգեբանական բնագիտությունը հիմունքը, կը լինէր երևակայութեան գործունէութիւնը. իսկ սրա պարզաբանութիւնը ամենից լաւ և պարզ կերպով դարձեալ ձեւակերպող գեղարուեստի յուշարձանների վրայ կարելի է կատարել:

Տեսնում ենք, ինչպէս այս դէպքում իրօք բոլոր ճանապարհները դէպի հռոմ են տանում: Ո՛րքան անհրաժեշտ է այսպիսով պարզած պրօբլէմը շուտ և հաստատուն կերպով լուծել: Պէտք է նաև — թէև առանց այն էլ պահանջն ըստինքեան բաւական մեծ է — ամենից առաջ հիւսիսային, միջին և հարավային Եւրոպայի այլև Միջերկրականի և Առաջաւոր Ասիայի նախապատմական յուշարձանները դասաւորել ժամանակագրական կարգով, համաձայն նրանց մէջ գործադրուած երևակայութեան գործունէութեան: Երբ սրանց աստիճանաւորութիւնը համեմատական եղանակով պարզաբանուած է, որը հնարաւոր է եթէ նաև ի նկատի ունենանք դրանց փոխադարձ կախումները, այսպիսով մշակած կը լինինք մի կանոն, որի մէջ նաև քննեալ ժողովրդագրական նիւթը պատմական զարգացման տեսակէտից, այսինքն պատմականօրէն, կարելի է տեղաւորել: Երբ այս էլ կատարուած է, այն ժամանակ հնարաւոր է իւրաքանչիւր առանձին մարդկային խմբակցութեան ատկերապատմական զարգացման մէջ ունեցած առանձնայատուկ նշանակութիւնը որոշել. այսպիսով հնարաւոր կը լինի նաև գիտական համաշխարհային պատմութիւնը¹⁾:

Ահշուշտ այսպիսի համաշխարհային պատմութիւնը ամեն տեսակ պատմագիտութեան վերջին նպատակն է: Եւ դրան կա-

¹⁾ Այն հարցը, թէ ո՞րքան բնագրում քննութեան առած նշապատակի համար բացի նախապատմութիւնից նաև երեխաների գծագրութեան հոգեբանութիւնը պէտք է առաջ քաշել, այս կապակցութեամբ չեմ ուզում քննել: Ի հարկ է այս ուղիով ևս պէտք է գնալ: Առաջին քայլերը պէտք է լինին՝ ժողովուրդն ցածր և բարձր կուլտուրաների երեխաների գծագրութեան ահագին նիւթի. հոգեբանական — զարգացման — պատմական (կենսահոգեբանական) բարձր և ցածր կուլտուրաների նիւթի մշակումն և ստա-

րելի է հասնել. ոչ այլ ճանապարհով, քան մեթոդի և գործնականի, որքան էլ երևակայութիւնը այս դէպքում գերզգայական թռիչքով ուրախութեամբ դէպի ընդհանուր վեհոները շտապէ։ Սրան կարելի է հասնել, և այս է մեր այսօրւայ մօտիկ նպատակը և ոչ թէ իմացութեան նիւթական մասը, այն ժամանակ, երբ, այն պրօբլէմներին, որոնք հեռու դաշտում երևան են գալի, մօտենանք բոլորովին առանց կանխակալ կարծիքների։ Ո՞րքան ժամանակ է անցել օրինակ, որ մի կողմ է թողուել պատմական այն սովորութիւնը, որի համաձայն միայն գրուած աղբիւրներն էին ի նկատի առնւում։ Դեռ այսօր էլ այս հայեացքը պատահաբար երևան են գալի մեր դիտութեան անցեալ շրջանի մշակչներից։ Մեր դիտողութիւններում տեսանք ընդհանրապէս, որքան արտակարգ, այլ և տիեզերապատմական նշանակութիւն ունէին միայն մի քանի տասնեակ տարի առաջ արհամարհուած նախապատմութիւնը և նրա պեղումները։ Հէնց զուտ մեթոդական տեսակէտից նայենք. մի՞թէ մի յուշարձան, որը մարդկային անցեալի մի կտորը իւր մէջ անմիջապէս մարմնացնում է իմացաբանական տեսակէտից, աւելի բարձր չպէտք է գնահատել, քան միջնորդապէս գրուած որեւէ դէպքի մասին եղած պատմութիւն։ Եւ մանաւանդ մի՞թէ իւրաքանչիւր գեղարուեստի պատմութեան վերաբերեալ կարեւոր նախապատմական յուշարձան աւելի արժէք չունի, քան յիշատակարանը, քանի որ այն ոչ միայն անցեալ կարեւոր գործունէութեան մի մօմենտն է իւր մէջ ամուր պահում, այլ զրա բոլոր մօմենտները։

Պէտք է զգոյշ լինել, բայց և ամենից առաջ ազատ տիեզերապատմական պրօբլէմների անօտր օդի մէջ։

Կա՞ծ արդիւնքների համեմատութիւն. այնուհետեւ ժողովումն, որքան կարելի է լրիւ այլ ժողովրդների և այս կապակցութեամբ կարեւոր գեղարուեստական արտադրութիւնների, մշակումն այս նիւթի, այն հարցն ի նկատի ունենալով, թէ որքան նրանց մէջ կենսահոգեբանական զարգացման ընթացքի հետքեր կարելի է մշակել, որոնք երեխաների զծագրութեան հետ նոյնը լինէին կամ համեմատելի։

Այս տեսակէտից պէտք է մի վերջին, շատ կարեւոր հարց աչքի առաջ ունենալ:

Արդեօք մինչև այժմ քննութեան առնուած պահանջները իրօք իրենց մէջ ամփոփուած են տիեզերապատմական բոլոր պրօբլէմները:

Զկա՞յ արդեօք աւելին և դժուարիներ:

Առանց դժուարութեան պէտք է այո պատասխանել: Այո՛, այստեղ քննուած բոլոր հարցերն էլ որոշ սահմանափակման մէջ են և վերաբերում են այնպիսի ենթադրութիւնների, որոնք պատուելով են պարզուել: Մի քիչ խիստ և պարզ որոշելու համար ասենք, այս ենթադրութիւններն են՝ մարդկային պատմութեան ազգային ընթացք և ազգային զարգացման բնական ընթացք:

Մի՞թէ իրօք ամբողջ պատմութիւնը, որքան ի հարկ է այդ հնարաւոր է դիտել, բնական, այսինքն սկզբներից մինչև բարձր անհատական զարգացման, առաջադիմող կուլտուրայի ճանապարհով է դնացել: Թէ՞ նաև պատահական կայարաններ է ունեցել և ոչ թէ միայն ազգային խմբակցութեան ճանապարհը: Այս կը լինէր նոյնը, եթէ մարդ պահտնջէր, որ որևէ անտառ միայն այնպիսի ծառեր ունենայ, որոնք պարզ սերմից մինչև վերջին թռուածելը և փթած կտորներ դառնալը, ուրեմն ամբողջ կեանքի ընթացքը, ծառի բնական ընթացքի նման կատարեն: Ո՛չ. կան և ոստերի ու ճիւղերի շնորհիւ նոր ճիւղեր տուող ծառեր և ոչ ամեն ծառ բնական կեանք է ունենում: Այլ կերպ չէ նաև մարդկային խմբակցութիւնների կեանքում: Ի հարկ է ծառի և անտառի օրինակը մեզ կարող է սովորեցնել ո՛րքան ցանկալի և անհրաժեշտ է մինչև այժմ գործադրած դատման մեթոդը և կֆնայ այդպէս էլ: Ո՞ւր կտանէր բոյսերի կենսաբանութիւնը, եթէ հետազօտութիւնների ժամանակ չը սահմանափակուէին բնական օրինակներով, այլ կանգ առնէին ամեն մի օրինակի վրայ:

Սակայն իրողութիւնը քննում է այն, որ մեր կիրառած անհատականացնող հետազօտութեան տարրերից երբէք չի կարելի համաշխարհային պատմութեան ընթացքը հանել կամ դրա

հիման վրայ նկարագրել: Ինչպէս այս ահագին դարդացման դէպ-
քում, որը որակական բնոյթ ունի, ըստ ինքեան հասկանալի է
թւում, թէ հետազօտութեան այդ չափովը կարող ենք միայն
գաղափար մազմել և ոչ թէ տրամաբանօրէն կամ իմացաբանօ-
րէն, ուր քնաց դերդգայնօրէն վերակազմել կամ հետազօտել,
այնպէս էլ դրա ընթացքում պատահում են բարդութիւններ,
որոնց մինչև այժմ դիտած պարզ ձևերի մէջ երբեք չի կարելի
տեղաւորել, թէև ներքուստ նրանց մէջ գտնուին: Այս կարգին
են պատկանում օրինակ իւրաքանչիւր ժողովրդագաղթի և գաղ-
թականութեան տեղաւորումների որոշ դէպքերն ևս: Սա մի
այնպիսի կէտ է, որի մասին, այս տեղերում, Նոր Աշխարհի
պատմական նաւահանգստի կեդրոնական քաղաքում հեշտ է եր-
կու խօսք ասել: Ի՞նչ է անում Միացեալ Նահանգների պտտ-
մութիւնը իւրաքանչիւր խորը մտածող պատմաբանի համար
ամենահետաքրքիր նիւթի նկատմամբ: Ես կարծում եմ, այն, որ
այս հողի վրայ հողեբանական շատ հետաքրքիր, ընդհանուր
նշանակութիւն ունեցող, երկու գործողութիւններ միաւորուել
են և դեռ շարունակում են միաւորուել, որ տղգային այնպի-
սի տարրեր հողեբանօրէն փոփոխութեան են ենթարկւում, ո-
րոնք երևան են գալի որևէ ժողովրդագաղթի ժամանակ և
այնպիսիները, որոնք ենթարկւում են աղգային բնոյթի այնպի-
սի կերպարանափոխման, որը միշտ կապուած է գաղթող տար-
րի հանդէս գալովը: Գերմանական կայսերութեան ներկայ բնա-
կատեղին, ինչպէս յայտնի է, կուլտուրական երկու արտաքին
ունի. մէկը հին է, պրուսական Էլբայից արեւմուտ ընկնող հայ-
րենիքը, որաեղ առնուազն արդէն 1500 տարուց աւելի է ապ-
րում են և միւս մասը, որը Էլբայից արեւելք ընկնող գաղթա-
վայրն է, որը միայն 500 տարի առաջ սլաւօնական բնակիչ-
ներից է առնուած: Մենք, գերմանացիներս, լաւ գիտենք այն
տարբերութիւնը, որ կայ բերլինցու և քեօլնցու մէջ, արեւ-
ելեան Էլբայի կալուածատիրոջ և արեւմուտքի Փաբրիկանտի մէջ,
արեւելեան պետութեան Պրուսիայի և միւս պետութիւնների
մէջ. այս տարբերութիւնը կտրուկ, վնասական, աւելի տիրապե-
տող բնաւորութեան և աւելի շուտ յարմարուող, ծոյլ, են.

Թարկուող բնաւորութեան տարբերութիւն է. տարբերութիւն մայր երկրի և գաղութի բնաւորութիւնների: Այո՛, նոյն տեսակ տարբերութիւն, ինչպիսին կայ անգլիական և ամերիկական, մայր երկրի և գաղութի անգլոսաքսերի մէջ. իրօք մի հիմնական տարբերութիւն Ամերիկայի պատմութեան համար, որովհետեւ երբեք իրլանդացին, գերմանացին, շվեդացին, ռոմանացին, սլաւօնը Միացեալ Նահանգներում գաղթավայրցիի վերածւում:

Սակայն այս դեռ բոլորը չէ: Այս մեծ երկրի և նրա ցեղերի կազմակերպութեան համար կարեւոր նշանակութիւն են ունենում ժողովրդագրադթի ժամանակ կազմուած հոգեկանի յետմղման սկզբունքները: Այստեղ, այս գաղթային երկրում, ժողովուրդ ժողովուրդի կողքի է ապրում, թէև մի ընդհանուր անգլոսաքսօնական գոյնի տակ և նրանք բոլորն էլ ազգում են միմեանց վրայ և գործում են միմեանց դէմ: Սա մի այնպիսի գործողութիւն է, որը ազգային բնոյթը, որը արդէն գաղութայինի է վերածուել, միանգամ ևս կրկին մի ուրիշ ուղղութեան է փոխւում, մինչև որ միաժամանակ յասուկ աշխարհագրական պայմանների շնորհիւ մի նոր, միատեսակ խմբակցական կեանի նշաններ առաջ կգան:

Այս գործողութիւնը կատարւում է պատմութեան լոյսի տակ և հազարաւոր ու կրկին հազարաւոր աղբիւրներ՝ այս երկրի արտաքին պատմութիւնը, կազմութիւնը, սօցիալական դարգացումը, բանաստեղծութիւնը և դեղարուեստը այդ մասին են խօսում և դեռ երկար ժամանակ կպատմեն այդ մասին: Ի՞նչ դարձանալի խնդիր մի պատմաբանի համար. այսպիսի հոգեկան յետմղումները, խառնուրդները և զատումները հետազօտել և նրանցից մի մեծ միատեսակ ազգային պատկեր հանել: Եւ ի հարկ է մի խնդիր, որը մեր տիեզերապատմական նկարագիրների երկու գծերից չէր կարելի հանել: Միւս կողմից կարելի էր այս առանց նրա պարզ կերպով ծեւակերպել: Եւ արդեօք այս այն պատմական բարդութիւններից չէ՞, որ կան նրա մէջ:

Մեծ, անսպառ, ահագին է տիեզերապատմական անցքի հարստութիւնը: Ով ուզում է այն դիտել, նա սկզբից և եթ

չպէտք է յանդգնէ այդ բոլոր դանձերը մի շտեմօրանում, մի սենեակում տեղաւորել: Մանաւանդ, երբ միաժամանակ մտածում է, թէ մարդիկ ի՞նչքան քիչ բան դիտեն իրենց անցեալի մասին, ուր մնաց, որ ասպազայի մասին էլ դիտենային: Ի՞նչ առեղծուածային ծեով է խօսւում Մարդասիրութեան ծննդեան ժամի մասին, երբ, չերգերի հայեացքով, Էլօհիմը մարդկանց միւս օրդանական աշխարհից բաժանում էր և ստեղծագործութեան բոլոր գործողութիւններից ամենաստարի ժամանակ դեռ ևս, յատկապէս բանականութեան շունչն էլ փչում է: Ո՞րքան հարիւրհազարաւոր, միլիօնաւոր տարիներ են անցել դուցէ, երբ մարդն սկսել է օրդանական բնութիւնից դատուել, որին այժմ նա տիրում է: Եւ յաւիտենականութիւնը ո՞րքան ժամանակներ է կլանել սկսած այն առաջին փորձից, երբ մարդը զրգիւնից ու զուգորդութիւնից յետոյ դողդոջուն քայլերով մօտեցել է այն խառնիճազանջ գործողութեան սկզբնաւորութիւններին, որը այժմ մեր մտածողութեան պարզ եզրակացութիւնների մէջ են դառնւում:

Իսկ մենք այդ միլիօնաւոր տարիներից դիտենք միայն հազարաւոր տարիները. և այսպիսով ուղում ենք նախկին մարդկային կեանքի սենեակները մտնել: Մի՞թէ այս դէպքում սաղմոսերգուի զգացումը չի պատելու մեզ, որով մենք այս ժամի սկզբում մեր բացատրութիւններն սկսեցինք: Ի հարկ է. երկիւղածութեամբ ենք մօտենում մարդկային բեմին: Սակայն այս մեզ չի կարող արգելել, որ այն, ինչ որ զգացումնալի պաշտում ենք, միաժամանակ դիտականօրէն հիմնաւորենք բանականութեան սուր միջոցներով, որը հէնց այս մարդկային զարգացման ընթացքում մեր մէջ առաջ է եկել: Եթէ չենք ուղում սայթաքել, մի քանից պէտք է խուսափենք՝ մեր զգացումները և մեր դատողութիւնները խառնելուց, ոգևորող և բաւօր հիացմունքի զգացումները և բանականութեամբ հիմնաւորած հետադատութիւնը իրար հետ զուգորդելուց: Այս մտքով են հասկացուած այս ժամին մեր արտայտած դատողութիւնները և այս մտքով, իբր դիտական մտածող, չենք յուսահատւում բազմութիւն տիեզերապատմական պրօբլէմների վերջնական լուծմանը

մօտենալու գերմանական հումանիստերից ամենահամարձակի պարերազմական գոչով. Perrumpendumest tandem! Perrumpendum est! (Պէտք է յաղթահարել վերջապէս. Պէտք է յաղթահարել):



Ինչպէս աշխարհի տմեն մի իր, այնպէս էլ այս գիրքն ունի իւր առաջ գալու պատճառները և առիթները: Պատճառն այն է, որ ես իմ «Deutsche Gesihilhte»-ի (Գերմանական Պատմութիւն) ուսումնասիրութեան մէջ այնքան առաջ էի գնացել, որ պարտք էի համարում, գրեթէ նրա կուլտուրական բոլոր ժամանակների լաւ ծանօթութիւնից ընդհանուր պատմական փորձառութիւններ ժողովել, որոնց սիստեմա տիկ մշակումը այս պատմութեանը դեռ պակասող հատորներում պէտք է օգտակար լինէին: Առիթն էր Սէն-Լուիի համաշխարային ցուցահանդէսի կօնգրէսին մասնակցելու ստացածս հրաւերը. այստեղ տեղի ունեցաւ առաջին դասախօսութիւնը և ապա Նիւ-Իօրկի Կօլումբիա համալսարանի հրաւերը 150-ամեայ դոյութեան յօբելեանին հանդիսաւոր դասախօսութիւն կարդալով մասնակցելու: Այսպէս առաջ եկան վերջին չորս դասախօսութիւնները: Միւս կողմից առիթ եղաւ նորագոյն անհատական հոգեբանութեան գիտական գրականութիւնը, ամենից առաջ Լիպպսի գիրքը (Leitfadem der Psychologie Lpz. 1903), ընդարձակ չափերով փորձ անել հոգեբանական օրէնքները պատմագիտութեան մէջ գործադրելու:

Գրքոյկը միաժամանակ լոյս կը աւետի անգլիերէն Moderne scence of history վերնագրով Macmillan ընկեր, հրատարակութեամբ:

Թարգ. Pessimist.

Խմբ. հրատ. Գիւտ Աղանեսանց ա. ք.